քեաց պերկրաւոր կեանս ի ժամանակի Հնձոց Ժանտախտ ցաւոց. **1829** *ամի Փրկչին»։*

Այս հին գերեզմանատան սեպհնատունը չինել է տուել Բագուեցի Սահակ Ագամեանցը նոյն 1829 *թուին, ինչպէս գրան ճակատի արձանագիրը ցոյց է տալի։* (1888) 1893 *և* 94 *թուերին տարին մի անգամ* (Զատկին) *գերեզմանատունը գնալով չկարացինք հին տապանագիրը գտնել։ Որովհետեւ Բագուում մի նշանաւոր հնութիւն կամ նորութիւն չկարացինք գտնել իրեւ զարդ Բագուի տեղագրութեանը, և Բագուում ստացայ, և եկեղեցւոյ բեմի վրայից կարդացի* (յունվար 1894) *Վեհ. Ս. Մկրտիչ Կաթուղիկոսի օրհնութեան անդրանիկ կոնդակը. ուստի կարեւոր համարեցի այն անդրանիկ կոնդակի պատճէնը գնել գրքիս մէջ և համարել զարդ և փառք Բագուին։*

Կոնդակի իմաստալից բովանդակութեան համար չեմ ուզում կրկնել, և բաւական եմ համարում «Արձագանք» շաբաթաթերթի գրած յօդուածներն սոյն կոնդակին վերաբերեալ։

ԿՆԻ·Ե
1893

*Ս*կրտիչ ծառայ Քրիստոսի եւ անհատանելի կամօքն Աստուծոյ Ընտիկոսպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք հանդերձ Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Ողջոյն քեզ, Առաքելական Եկեղեցի Հայաստանեայց, Թադէոսի, Բարթուղիմէոսի և Գրիգորի աւետարանաւ ծնեալք ի Քրիստոս, աճեալք և զարգացեալք հաւատովք Աստուածպաշտութեան։

Ողջոյն քեզ, Մայր Սիօն՝ լեառն Աստուծոյ Երուսաղէմ, եթէ ի քեզ երեւեցաւ լոյսն աշխարհի մարմնացեալ Փրկիչն, նոյն Միա-